Հիվանդների բժշկում

Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դալլին Հ. Օուքսն ուսուցանել է, որ հավատքը կարևոր է, որպեսզի հրաշքներ կատարվեն:

«Հավատքը կարևոր դեր ունի երկնային զորությունների օգնությամբ բժշկվելու գործում: Մորմոնի Գիրքն անգամ ուսուցանում է, որ «եթե հավատք չլինի մարդկանց զավակների մեջ, Աստված չի կարող հրաշք գործել նրանց մեջ» (Եթեր 12.12) [տես նաև 1 Նեփի 7.12; ՎևՈւ 35.9]: Հիվանդներին սպասավորելու վերաբերյալ իր հիշարժան ելույթում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Հավատքի անհրաժեշտությունը հաճախ թերագնահատվում է: Հիվանդը և նրա ընտանիքը հաճախ, կարծես, լիովին ապավինում են քահանայության զորությանը և հույս ունենում, որ սպասավորող եղբայրները կունենան բժշկության պարգևը, մինչդեռ մեծ պատասխանատվություն է կրում օրհնություն ստացողը: .. Գլխավոր գործոնն անհատի հավատքն է, երբ մարդը գիտակից է և պատասխանատվության տարիքի: «Քո հավատքը քեզ ապրեցրեց» [Մատթեոս 9.22] խոսքն այնքան հաճախ էր կրկնում Վարդապետը, որ այն գրեթե կրկներգ էր դարձել» [“President Kimball Speaks Out on Administration to the Sick,” *New Era,* Oct. 1981, 47]” («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2010, 49):

Երեց Դալլին Հ. Օուքսը նաև հիշեցրել է մեզ, որ հավատք ունենալու համար կարևոր դեր ունի Աստծո կամքն ընդունելու պատրաստակամությունը.

«Երբ գործադրում ենք Աստծո քահանայության անառարկելի իշխանությունը և թանկ ենք գնահատում Նրա խոստումը, որ Նա կլսի և կպատասխանի հավատքի աղոթքին, մենք պետք է միշտ հիշենք, որ հավատքը և քահանայության բուժիչ զորությունը չեն կարող հանգեցնել մի արդյունքի, որը հակառակ է կամքին Նրա, ում քահանայությունը մենք կրում ենք: Այս սկզբունքն ուսուցանվում է այն հայտնության մեջ, որը թելադրում է, որ Եկեղեցու երեցները պետք է իրենց ձեռքերը դնեն հիվանդների վրա: Տիրոջ խոստումն է, որ «նա, ով բժշկվելու հավատք ունի առ ինձ *և նշանակված չէ մահվան,* պիտի բժշկվի» (ՎևՈւ 42.48; շեշտադրումն ավելացված է): Նմանապես, մեկ այլ ժամանակակից հայտնության մեջ Տերը հայտարարում է, որ երբ նա, ով «խնդրում է համաձայն Աստծո կամքի .. կատարվում է, ճիշտ ինչպես նա խնդրում է» (ՎևՈւ 46.30) [տես նաև Ա Հովհաննես 5.14; Հելաման 10.5]:

Այդ ամենից մենք սովորում ենք, որ անգամ Տիրոջ ծառաները, որոնք գործածում են Նրա աստվածային զորությունը այնպիսի պայմաններում, երբ բավականաչափ հավատք կա բժշկվելու, չեն կարող այնպիսի քահանայության օրհնություն տալ, որը կբժշկի մարդուն, եթե այդ բժշկումը Տիրոջ կամքը չէ:

Որպես Աստծո զավակներ, իմանալով Նրա մեծ սիրո և Նրա անսահման գիտելիքի մասին, թե որն է լավագույնը մեր հավերժական բարօրության համար, մենք ապավինում ենք Նրան: Ավետարանի առաջին սկզբունքը հավատքն է առ Տեր Հիսուս Քրիստոսը, իսկ հավատք նշանակում է վստահություն: Ես զգացել եմ այդ վստահությունը, երբ հորեղբորս որդին ելույթ ունեցավ մի դեռահաս աղջկա թաղմանը, ով մահացել էր ծանր հիվանդությունից: Նա ասաց այս խոսքերը, որոնք սկզբում ապշեցրին, իսկ հետո ուսուցանեցին ինձ. «Ես գիտեմ, որ Տիրոջ կամքով էր, որ նա մահացավ: Նրան լավ բժշկական օգնություն էր տրամադրվել: Նրան քահանայության օրհնություններ էին տրվել: Նրա անունը տաճարի օրհնությունների ցուցակում էր: Հազարավոր մարդիկ աղոթում էին, որ նրա առողջությունը վերականգնվեր: Եվ ես գիտեմ, որ այս ընտանիքում բավականաչափ հավատք կար, որ նա բժշկվեր, եթե միայն այժմ նրան տուն տանելը Տիրոջ կամքը չլիներ»: Ես զգացել եմ այդ նույն վստահությունը քաղցկեղից մահացած մեկ այլ ընտրյալ աղջնակի հոր խոսքերում: Նա հայտարարեց. «Մեր ընտանիքի հավատքն առ Հիսուս Քրիստոս է, և այն կախված չէ արդյունքից»: Այդ ուսմունքները ճշմարտանման են հնչում ինձ համար: Հարազատի բժշկության համար մենք անում ենք այն ամենն, ինչ կարող ենք, իսկ հետո վերջնական արդյունքի համար ապավինում ենք Տիրոջը» («Հիվանդների բժշկությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* մայիս 2010, 50):

© 2015 BY INTELLECTUAL RESERVE, INC. ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐՈՒՄՆԱՀԱՏ ԵՆ